



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Գ Ի Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«22» հուլիսի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 24-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ կետի 12-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) գիտական հրատարակումների համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի և գիտության մասսայականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) գիտական հրատարակումների համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի հայտի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԳ

ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում (բուհերում, այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների (գիտական խմբերի) հեղինակած գիտական աշխատությունների հրատարակման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի, ինչպես նաև գիտության մասսայականացման համար Կազմակերպություններին ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը:

1. Գիտական աշխատության հրատարակման համար ֆինանսական աջակցություն տրամադրվում է Կազմակերպությունում ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման գիտական ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքների վերլուծությանն ու ամփոփմանը վերաբերող գիտական աշխատությունների (գիրք, մենագրություն, կոլեկտիվ մենագրություն, այլ) հրատարակման նպատակով:

2. Գիտական աշխատության հրատարակման համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով Կազմակերպության ղեկավարը գրավոր դիմում է Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ ներկայացնելով.

- գիտական աշխատության հրատարակման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի հայտը (այսուհետ՝ Հայտ),
- հրատարակման ենթակա նյութը (տպագիր),
- հիմնավորում, մասնավորապես՝ գիտական աշխատության նպատակները, խնդիրները և կարևորությունը, նորույթը, արդիականությունը, ստացված արդյունքները, եզրակացությունները, տեսական և գործնական նշանակությունը, կապը ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների և ՀՀ պետական բյուջեից բազային

Ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի հետ, ընթերցողների շրջանակը և ըստ անհրաժեշտության այլ տեղեկատվություն,

- Կազմակերպության (բուհում՝ ֆակուլտետի) գիտական խորհրդի երաշխավորությունը,

- համաֆինանսավորման ծավալների մասին տեղեկանք (առկայության դեպքում),

- գիտական աշխատության հեղինակ(ներ)ի գիտական արդյունավետության բնութագիրը (վերջին 5 տարիների ընթացքում հեղինակ(ներ)ի՝ մինչև տասը գիտական հրապարակումների ցանկը): Ընդունելի է նաև Կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման առցանց համակարգում (<https://grants.scs.am>) գրանցված հեղինակ(ներ)ի անհատական (տասներկու նիշանոց) կոդ(եր)ը ներկայացնելը:

3. Գիտության մասսայականացման համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով Կազմակերպության ղեկավարը գրավոր դիմում է Կոմիտե՝ ներկայացնելով համապատասխան միջոցառման անցկացմանն աջակցություն տրամադրելու հիմնավորում, մասնավորապես՝ միջոցառման նպատակները, խնդիրները, կարևորությունը, արդիականությունը և ըստ անհրաժեշտության այլ տեղեկատվություն:

4. Հայտերը գնահատելու, ինչպես նաև գիտության մասսայականացման միջոցառման անցկացմանն աջակցություն տրամադրելու վերաբերյալ առաջարկության համար Կոմիտեն ստեղծում է մրցութային (գնահատող) հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), հաստատում է Հանձնաժողովի աշխատակարգը:

5. Հանձնաժողովը գնահատում է Հայտերը և տալիս է գիտական աշխատության հրատարակմանն աջակցություն տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն: Կազմակերպության ներկայացրած գիտության մասսայականացման միջոցառման անցկացման հիմնավորման հիման վրա Հանձնաժողովը տալիս է աջակցություն տրամադրելու վերաբերյալ եզրակացություն:

6. Ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացության մասին Կոմիտեն գրավոր տեղեկացնում է Կազմակերպության ղեկավարին:

7. Գիտական աշխատության հրատարակմանն աջակցություն տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ դրական եզրակացության դեպքում Կազմակերպությունը հրատարակչական ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքում է Ծառայությունների մատուցման պայմանագիր, որի պատճենը ներկայացնում է Կոմիտե: Նշված պայմանագրով նախատեսված ծախսերի հատուցման նպատակով

Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագիր:

8. Գիտության մասսայականացման միջոցառման անցկացմանն աջակցություն տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ դրական եզրակացության դեպքում Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագիր:

9. Կազմակերպությունը գիտական հրատարակումների կամ գիտության մասսայականացման համար տրամադրված ֆինանսական միջոցների ծախսման մասին Կոմիտե է ներկայացնում հաշվետվություն:

ՀԱՅՏ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Կազմակերպության անվանում
2. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի անվանում
3. Գիտական աշխատության հեղինակ(ներ)ի
 - 3.1 ազգանուն, անուն, հայրանուն
 - 3.2 ծննդյան ամսաթիվ (*օօ/աա/դդդդդ*)
 - 3.3 զբաղեցրած պաշտոն
 - 3.4 գիտական աստիճան, կոչում
 - 3.5 բջջային հեռախոս
 - 3.6 էլեկտրոնային հասցե
4. Գիտական աշխատության
 - 4.1 անվանում
 - 4.2 լեզու
 - 4.3 ծավալ
 - 4.4 նախատեսվող տպաքանակ
5. ՀՀ գիտության կոմիտեից հայցվող ֆինանսական աջակցության ծավալ (*հազար դրամ*)
6. Համաֆինանսավորման ծավալ (*հազար դրամ, առկայության դեպքում*)

Հայտատուի ստորագրություն

Հայտի լրացման ամսաթիվ